



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մթնոլորտում ածխաթթու գազի պարունակության ավելացման անարրուպոզեն (մարդածին) պայրճառը թեև բավական լայն փարածում ունի, բայց և այնպես որոշ մարդիկ վիճարկում են: Նրանց կարծիքով մարդու փնտեսական գործունեությամբ պայմանավորված ածխաթթու գազի արտանետումները չափազանց չնչին են համեմատած բնական գործունեքով պայմանավորված արտանետումների հետ: Ըստ նրանց, մթնոլորտում ածխաթթու գազի հիմնական աղբյուր են

- հրաբուխները,
- անտառային հրդեհները,
- կենդանիների շնչառությունը
- հանածո վառելիքների օգտագործումը:

Յուրովի գնահատելով նշված աղբյուրներից յուրաքանչյուրի դերը, նրանք հանգում են այն համոզման, որ մթնոլորտում ածխաթթու գազի պարունակության մեծացման գլխավոր պայրճառը հրաբուխներն են: Եվ, հետևաբար, մթնոլորտի աղտոտման հիմնական պայրճառը բնական (մարդկանց գործունեությամբ չպայմանավորված) պրոցեսներն են: Նրանք արդարացնում են մարդուն և հայտարարում, որ Էկոլոգիական ձգնաժամերը հորինվածք են, որոնք օգտագործում են որոշ կազմակերպություններ ու անհատ մարդիկ իրենց համար շահավետ ինչ-ինչ նպատակների հասնելու համար:

Տեղին է հիշեցնել, որ աշխարհում հաշվվում է շուրջ 1350 պոպուլյացիա առումով ակտիվ հրաբուխ, որոնցից 19-ը ներկայումս գործում են, այսինքն՝ տեղի են ունենում ամենօրյա ժայթքումներ:

Փորձեք օգրվել հուսալի տեղեկատվական աղբյուրներից և պարզել CO_2 արտանետումներում հրաբուխների, անտառային հրդեհների, կենդանիների շնչառության և հանածո վառելիքների այրման ներդրումները: Ներկայացրեք փոխվածքներ աղյուսակով և բացահայտեք ածխաթթու գազով մթնոլորտի աղտոտման գլխավոր պայրճառը կամ պայրճառները: